

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

1.1.1. 2002թ. հունվար-հոկտեմբերի ՀՆԱ ցուցանիշը

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալը, ընթացիկ գներով, 2002թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 1075413.5 մլն. դրամ, իսկ դրա աճի տեմպը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 112.2%՝ 2001թ. հունվար-հոկտեմբերի 109.6%-ի դիմաց:

Դիտարկվող ժամանակաշրջանում, տնտեսության հիմնական բազային ճյուղերում ստեղծվել է ՀՆԱ (հիմնական գներով) ծավալի մոտ 75%-ը: Այդ ճյուղերի հավելածի տեմպը 2002թ. հունվար-հոկտեմբերին, նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ կազմել է 14.0%՝ 2001թ. նույն ցուցանիշի 9.9%-ի դիմաց:

ՀՆԱ արտադրությունը տնտեսության հիմնական բազային ճյուղերով

(%-ով)

	Աճի տեմպը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատ- վածի նկատմամբ		ՀՆԱ հավելածի կազմը		ՀՆԱ կառուցվածքը ընդամենի նկատմամբ	
	հունվար-հոկտեմբեր 2001	2002	հունվար-հոկտեմբեր 2001	2002	հունվար-հոկտեմբեր 2001	2002
ՀՆԱ, հիմնական գներով	108.5	112.0	7.8	10.9	90.5	90.4
որից՝						
արդյունաբերություն	103.3	115.1	0.8	3.3	21.8	22.5
գյուղատնտեսություն	111.5	103.2	2.7	0.8	25.2	23.0
շինարարություն	111.5	141.5	1.2	4.4	10.7	13.8
տրանսպորտ և կապ	118.7	105.5	1.2	0.4	6.6	6.4
առևտուր և հանրային սնունդ	115.4	114.8	1.3	1.3	8.9	9.0
Ընդամենը, բազային ճյուղերը	109.9	114.0	7.2	10.2	73.2	74.7
Ապրանքների և ներմուծման զուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	120.8	113.6	1.8	1.3	9.5	9.6
ՀՆԱ, շուկայական գներով	109.6	112.2	9.6	12.2	100.0	100.0

Համախառն ներքին արդյունքի դինամիկան 2001-2002թթ

(%-ով նախորդ տարվա համապատասխան
ժամանակաշրջանի նկատմամբ)

